

Դավիթ Վ. Պետրոսյան
Բանաս. գիյ. դոկտոր

ԼՐԱԳՐՈՂ-ԱՐՏԱՔԻՆ ՀԱՍՑԵԱՏԵՐ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայկական մեդիատեքստերի օրինակով *

Բանալի բառեր– լրագրող հեղինակ, մեդիատեքստ, լսարան, հասցեատեր, երկխոսային փոխհարաբերություններ, դերային պահվածքներ, վերհասցեատեր, ինտերտեքստուալ տարածք:

Մուտք

Լրագրող-հասցեատեր փոխառնչությունների հանդիպավայրը մեդիատեքստն է: Իր դրսևորման տարբեր ձևերով հանդերձ (լրագրային տեքստ, հեռուստա և ռադիոտեքստ, գովազդային տեքստ, համացանցային տեքստ և այլն), այն բնորոշվում է հիմնարար մի առանձնահատկությամբ, որ միանշանակորեն հաստատում են մերօրյա տեսաբանները. խոսքը մեդիատեքստերի **երկխոսային բնույթի** մասին է:

Ընդհանրապես յուրաքանչյուր տեքստ, ուղղված լսարանին, ենթադրում է վերջինիս արձագանքը: Բախտինյան հայտնի դրույթին, այն է՝ «Յուրաքանչյուր կարծիք, որ ծնվում է իբրև նախորդ կարծիքի հակազդեցություն կամ ըմբռնում, միշտ երկխոսային է»¹, հետազոտողը հավելում է. «Երկխոսությունն արդեն հաստատվում է այնտեղ, որտեղ կայանում է տեղեկատվության համարժեք փոխանցման և դրան ծանոթանալու գործընթացը: Հեղինակը և ընթերցողը ներառվում են...միասնական երկխոսային տարածք, և նրանց միջև հաստատվում է ընդհանուր երկխոսային մթնոլորտ»²:

Այս համատեքստում հաստատված իրողություն է այն տեսակետը, որ երկխոսայնությունը հատկանշական է ոչ միայն երկխոսային, այլև մենախոսական

*Հոդվածն ընդունվել է տպագրության 20.12.2014:

1 Տե՛ս **Дускаева Л. Р.** Диалогическая природа газетных речевых жанров, СПб., 2012, с. 13.

2 Տե՛ս **Шалимова Екатерина Викторовна**, Автор-публицистический текст-читатель: специфика диалогового взаимодействия, «Теория журналистики», с. 95.

տեքստերին³:

Մեր նպատակն է կենտրոնանալ մեղիատեքստերում լրագրող-արտաքին հասցեատեր երկխոսության մի քանի առանձնահատկությունների վրա, որոնք փորձել ենք վեր հանել կառուցվածքային հայեցակետով⁴:

1. Երկխոսություն՝ հանդիպումից առաջ

Լրագրողի (հեղինակի) և արտաքին հասցեատիրոջ (ընթերցողի) հանդիպումը միանգամից չի կայանում: Հեղինակը, ելնելով հրապարակման թեմատիկ-բովանդակային ուղղվածությունից, պատկերացնում է հնարավոր ընթերցողների համոզմունքների դաշտը, նրանց հուզող հարցերի առաջնահերթությունը, իր առաջադրած խնդիրների հրատապությունը և այլն: Ըստ այդմ նրա մեջ ի հայտ են գալիս **դերային որոշակի պահվածքներ**, որոնք այնուհետև արտացոլվում են տեքստում ընդհանրապես կամ նրա առանձին հատվածներում:

Լրագրողի դերային պահվածքի ուշագրավ դրսևորումներից մեկը տեքստում, հատկապես հրապարակախոսական, վերլուծական հոդվածներում **ներքին հասցեատիրոջ (կամ հասցեատերերի) առկայությունն է**: Ներքին հասցեատերը լրագրողի դիմակն է, նրա տրոհված ես-ը (ես-երը), որի միջոցով հեղինակը հնարավորություն է ստանում ավելի լայն բացելու իր հոգեմտավոր աշխարհը, ներքին բազմաձայնություն մտցնելու իր մտահղացումների մատուցման մեջ: Տեքստի ներսում ստեղծվում է յուրահատուկ երկխոսային թատերական միջավայր, ուր փորձարկվում է հեղինակային խաղընթացը (սցենարը)՝ հեղինակի և ներքին հասցեատիրոջ դերային բաշխումներով. հարցեր առաջադրողը հիմնականում ներքին հասցեատերն է, պատասխանողը՝ հեղինակը: Այս հնարքը նախապատրաստում է տեքստի ձանապարհը դեպի արտաքին հասցեատեր կամ արտաքին լսարան⁵:

Ընթերցողի հետ առաջիկա հանդիպման հաջորդ հոգեբանական հնարքը ի հայտ է գալիս հեղինակի այն մտորումներում, որոնց մեջ նա **խոստովանում է** իր այս կամ այն ցանկության, երևույթը, իրադարձությունը մատուցելուց առաջ կատարած քայլերին անձնական-հոգեբանական այլ իրավիճակների շուրջ մտերմիկ տրամադրություն ստեղծելու մասին: Նման մտեցումը բնորոշ է հատկապես փորձառու լրագրողներին, որոնք քաջածանոթ են արտաքին հասցեատիրոջ հետ անմիջական մթնոլորտ ստեղծելու նրբություններին: «Այսօր **ցանկանում էի** անպարտության հանձնել հետաքրքիր (իմ կարծիքով) մի հոդված՝ նոր տպված գրքերի մասին, սակայն մի տեսակ անհարմար զգացի հրապարակել այն (ընդգծումը մերն է-Դ. Պ.)»⁶, -գրում է «168 ժամ» թերթի հոդվածագիրը՝ նախապատրաստելով ընթերցողի «ինչու»-ն ու նաև՝ հետագա երկխոսությունը նրա հետ:

Երբեմն հեղինակը հրապարակումը սկսում է հետաքրքիր մի դրվագի նկարագրությամբ՝ ընթերցման տրամադրելով հասցեատիրոջը և խոստանալով փակագծերը բացել գրույցի ընթացքում («Զբոսնում էի անցած հանգստյան օրերին թոռներիս հետ «Հաղթանակ» զբոսայգում ու բառացիորեն քարացա մի անտեսանելի թռչնակի դայլալից») ⁷:

3 Տե՛ս **Бахтин М. М.** Эстетика словесного творчества, М. «Искусство», 1979, с. 296, **Дускаева Л. Р.** Основы лингвистики речи, учеб. Пособие, М., Изд. МГУ, 2010, с. 124, **Солганик Г. Я.** Диалогическая природа газетных речевых жанров, с. 16 и др.

4 «Մեղիատեքստ» եզրույթի ընդգրկումները շատ լայն են, ուստի հոդվածում մեր դիտարկումները հաստատող օրինակներն ընտրվել են միայն տպագիր և առցանց մամուլի էջերից:

5 Լրագրող-ներքին հասցեատեր երկխոսային հարաբերությունների մասին առավել մանրամասն տես **Դավիթ Վ. Պետրոսյան**, Լրագրողը և ներքին հասցեատերը հայկական մեղիատեքստերում, «Վեմ», ապրիլ-հունիս, N 2, 2014, էջ 166-172:

6 «168 ժամ» եռօրյա թերթ, N 74, հուլիսի 19-21, 2014 թ.:

7 «Հայոց աշխարհ», օրաթերթ, 22 հուլիսի 2014 թ.:

Ընթերցողի հետ հանդիպման նախապատրաստվելու տարբերակներից մեկն էլ թերևս **ժանրային տարատեսակի** ընտրությունն է: Կախված այն բանից, թե ինչ ընդգրկում ունի ասելիքը (տեղեկատվություն՝ն է գերակշռողը, իրադարձության, երևույթի գնահատականը, թե՛ փաստարկների ու վերլուծությունից բխող հետևությունների կարևորությունը), հեղինակը որդեգրում է նյութի մատուցման համապատասխան ժանր: Վերջինիս ձիշտ ընտրությունը կարող է դառնալ ընթերցողի հետ անմիջական երկխոսություն սկսելու կարևոր լծակներից մեկը:

2. Երկխոսություն վերհասցեատիրոջ ներկայությամբ

«**Վերհասցեատեր**» (нададресат) եզրույթը առաջին անգամ կիրառել է Մ. Բախտինը: Տեքստում ենթադրվող հեղինակ-հասցեատեր երկխոսային փոխհարաբերություններից բացի նա առանձնացնում է ուշագրավ մի իրողություն՝ **երրորդի** ներկայությունը: Բացի առաջին երկուսից, գրում է Մ. Բախտինը, ենթադրվում է նաև վերհասցեատիրոջ ըմբռնումը: Այդ վերհասցեատերը և նրա կատարելապես ձիշտ պատասխան ընկալումը տարբեր դրսևորումներ են ստանում (Աստված, ճշմարտություն, մարդկային խղճի դատ, պատմության դատ, ժողովուրդ, գիտություն և այլն)⁸: Բախտինի տված բնութագիրը թերևս կարելի է ընդլայնել՝ նկատի ունենալով, որ վերհասցեատերը ոչ միայն «կատարելապես ձիշտ պատասխան ընկալում» է՝ ի դեմս Աստծո, բարու, խղճի դատի, ժողովրդի և մյուսների, այլ նաև նրանց հակապատկերը՝ սատանա, չարիք, դաժանություն, ամբոխ և այլն: Եվ սրանք՝ իբրև արքետիպային (կամ կարծրատիպային) իրողություններ, ուղեկցում են հեղինակին ու ընթերցողին իրենց համապատասխան արժեհամակարգերով:

Այս առումով բացառություն չեն մեղիատեքստերը, ավելի կոնկրետ՝ հայկական մեղիատեքստերը: Ընդ որում տեղեկատվական ժանրերում վերհասցեատիրոջ ներկայությունն ավելի թույլ է արտահայտված, քան հրապարակախոսական նյութերում, որոնց մեջ երկխոսայնության տարրերը, բնականաբար, ավելի ակտիվ են:

Վերհասցեատերը, տեքստում լինելով գաղափարական, բարոյական, գեղագիտական ըմբռնումների ցուցիչ, հեղինակ-ընթերցող երկխոսային հարաբերություններում հաճախ կողմնորոշիչ դեր է խաղում: Այն կարող է վանել կամ հրապուրել ընթերցողին, ազդել վերջինիս համոզմունքների վրա, կարծիք փոխել, համախմբել նրան որոշակի գործողությունների շուրջ և այլն: Կարող է հանդես գալ բացահայտ կամ անուղակիորեն:

Ուղղակի ներկայության դեպքում վերհասցեատիրոջ անունը կարող է հիշատակվել ոչ մեկ անգամ, ընդ որում՝ նաև տարանվանումներով՝ «Աֆրիկյանների տունը», «ամենահին շենքերից մեկը», «**Երևանը**»....., «**Երկիր**, որի սահմաններին զինվոր է մեռնում, որ...անվտանգ մնա **պետությունը**...»⁹ (Լուսինե Հովհաննիսյան, Ոստիկանը տարավ ջրահարսի պես աղջկան...) և այլն: Սրանք ի վերջո միավորվում են մեկ ընդհանուր արքետիպ-գաղափարի մեջ՝ **Հայրենիք**, որն իբրև գլխավոր վերհասցեատեր, ի մի է բերում տվյալ հրապարակման մեջ առկա խորհրդածությունների թելերն ու հյուսվածքները:

Նույն հեղինակը մեկ այլ հոդվածում («Չարտագաղթեն, փոքրիկ տղա... Ես իմ

8 Бахтин М. М. Эстетика словесного творчества, с. 305. Վերհասցեատիրոջ առկայության իր հոդվածում անդրադարձել է նաև Ե. Շալիմովան. տե՛ս Шалимова Е. В. Специфика диалога в публицистическом тексте: трехмерная картина взаимоотношений, <http://eizvestia.isea.ru>

Ի դեպ, վերհասցեատիրոջ ներկայությունը հաջողությամբ խաղարկվում էր դեռևս անտիկ մշակույթի մեջ: Դրա լավագույն դրսևորումը Սոկրատեսի կերպարն է՝ Պլատոնի երկխոսություններում: Տե՛ս Платон, Собрание сочинений в четырех томах, т. 1, Москва, „Мысль“, 1990.

9 <http://zham.am> 18. 06. 2014:

ձայնը քեզ եմ տալու», 14.12.2013, Zham.am) նկարագրելով 12-ամյա տղայի անցած փորձությունների ուղին, ենթատեքստում շարունակ պահում է **արդարության**՝ իբրև վերհասցեատիրոջ ներկայությունը, թեև այս բառը հոդվածում որևէ տեղ չի հիշատակվում:

Վերհասցեատերը կարող է հայտնվել նաև նյութի վերնագրում՝ որոշակիորեն հուշելով հեղինակի ասելիքը և ընթերցողին ուղղորդելով թեմայի շուրջ համապատասխան մտորումների¹⁰:

Վերհասցեատերն, այսպիսով, մեղիատեքստում համախմբելով լրագրողին և ընթերցողին որոշակի գաղափարների շուրջ, զգալիորեն աշխուժացնում է երկ-խոսային տարրերի փոխշփումները և ըստ այդմ մեծացնում լրագրող-ընթերցող երկխոսության հավանականությունը:

3. Երկխոսություն տեքստի շուրջ

Լրագրող-լսարան փոխառնչություններում լրագրողի ինքնությունն իր դրսևորումներն է գտնում լսարանի բազմաչափ ընկալման մեջ, և հակառակը, լսարանի բազմաչափությունը հուշում է լրագրողին իր նախասիրություններն ու պահանջները¹¹: Ըստ այդմ լրագրողը և արտաքին հասցեատերը գործում են համախոսության, ընդդիմության, երբեմն էլ՝ երկուսի համադրության պայմաններում:

Հեղինակ-ընթերցող փոխհարաբերությունների լայն համապատկերում մենք կցանկանայինք կանգ առնել միջտեքստային հաղորդակցության այն տեսակի վրա, երբ երկխոսությունն ընթանում է արհեստավարժ լրագրողների տեքստերի միջև: Նման իրավիճակում նրանք ժամանակ առ ժամանակ **փոխում են իրենց դերերը** և մի դեպքում հանդես են գալիս հեղինակի, մյուս դեպքում՝ ընթերցողի կարգավիճակով: Ընթերցողը, գործընկերոջ տեքստին պատասխանելով, վերածվում է հեղինակի. ընթերցող է դառնում առաջին հեղինակը: Եվ այսպես՝ այնքան ժամանակ, քանի դեռ նրանց միջև շարունակվում է մտքերի գրավոր փոխանակությունը:

Նման երկխոսությունները կարող են ընթանալ հանդարտ, տեսակետների փոխլրացումներով, կարող են վերածվել բանավեճերի՝ հակադիր մոտեցումներով, բայց ընդհանուր հայտարարի գալու համատեղ ցանկությամբ: Բանավեճերն էլ, իրենց հերթին, ի գործում են փոխակերպվելու բանակովի, երբ մասնակիցներից յուրաքանչյուրը մինչև վերջ հավատարիմ է մնում իր սկզբունքներին: Այս դեպքում տեքստում ակտիվանում են հոգեբանական հնարքները (արհամարհանք գործընկերոջ կարծիքի հանդեպ, վիրավորական արտահայտություններ և այլն):

Երկխոսության վերոնշյալ և մյուս ձևերի մեջ կառուցվածքային առումով առկա է ընդհանրական մի կողմ, որն առանձնակի ուշադրության է արժանի, և որին հպանցիկ անդրադարձ կատարեցինք մեր հրապարակման առաջին մասում: Խոսքը և՛ լրագրողի, և՛ նրան արձագանքած ընթերցողի գրավոր տեքստերում **ներքին հասցեատերերի անմիջական մասնակցությամբ երկխոսություններն ակտիվացնելու մասին է:**

Եթե լրագրողը, ինչպես արդեն նշել ենք, մինչև ընթերցողի հետ հանդիպու-

10 Տե՛ս օրինակ, Ներշնչանքի և սիրո աղբյուր, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 19 հուլիս, 2014 թ., **Անալի Խաչատրյան**, Ազատության շունչն արստրակցիայում, «168 ժամ», մայիսի 22-23, 2014, **Երան Գոյումյան**, Սաքուր լսիդձը մեծագույն հարստություն է, հունիս 27, 2014, armversion.com, **Անահիտ Սիմոնյան**, Ճշմարտությունը ծնվում է բանավեճի ժամանակ, asparez.am, 07 նոյեմբեր, 2012 թ., և այլն:

11 Տե՛ս **Դ. В. Петросян**, Профессиональная идентичность журналиста и многовекторность национальной аудитории в кн. „Регионы в российском медиапространстве. Материалы Международной научно-практической конференции” „Журналистика” 2013, М., 2014, с. 84-85:

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ

2014 հոկտեմբեր-դեկտեմբեր, 2014 Գրքի, թիվ 4 (48) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2014

Չ (ՉԲ) Գրքի, թիվ 4 (48) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2014

ւնը սեփական մտքերը առավել համոզիչ դարձնելու համար տեքստի ներսում կարող է ստեղծել ներքին հասցեատիրոջ հետ երկխոսային միջավայր, ապա այս խաղընթացը ստեղծում է նաև գործընկեր լրագրողը՝ իր պատասխան տեքստում: Արդյունքում՝ չի բացառվում, որ միջտեքստային երկխոսություններն ընթանան մի քանի մակարդակներում՝ **հեղինակ-հեղինակ, ներքին հասցեատեր-հեղինակ, ներքին հասցեատեր-ուրիշ հեղինակ և այլն**: Ավանդ փորձենք կոնկրետացնել հայկական մամուլում (տպագիր, առցանց) հրապարակված երկխոսությունների օրինակով, ինչպիսիք են, օրինակ, 2014 թ. ամռանը Մոսկվայում հայ մեծահարուստ գործարար, ՌԴ քաղաքացի Լևոն Հայրապետյանի ձերբակալության շուրջ հայկական զանգվածային լրատվամիջոցներում քաղաքական և հասարակական գործիչների, լրագրողների աննախադեպ արձագանքները: Ընդամենը երկու շաբաթում միայն տպագիր և առցանց պարբերականներում լույս են տեսել տարբեր ժանրերով գրված հարյուրավոր հրապարակումներ: Լայն առումով սրանք ներառված են նույն թեմայի շուրջ ծավալված տրամախոսական մեծ համակարգի մեջ, որտեղ յուրաքանչյուր հեղինակ առաջին հայացքից մենախոսական թվացող իր տեքստով լրացնում է գործընկերոջ տեքստը՝ ստեղծելով **ինտերտեքստուալ տարածք**՝ կարծիքների, հայացքների ու տեսակետների լայն ընդգրկումով:

Մի կողմ թողնելով երևույթի քաղաքական-հասարակական հնչեղությունը՝ մենք առանձնացրել ենք շուրջ տասը հոդված, որոնցում լրագրող հեղինակները հանդես են գալիս նյութի մատուցման ներտեքստային կամ միջտեքստային երկխոսության եղանակներով: Նկատի ունենալով ներքին հասցեատիրոջ գործառույթների շրջանակը՝ հիշյալ տեքստերում կարելի է նկատել հետևյալ ընդհանուր գծերը.

ա) Ներքին հասցեատերը նույն տեքստում մեկից ավելի հարց է ուղղում հեղինակին, իսկ պատասխանները հիմնականում ամբողջացնում են հոդվածի գլխավոր ասելիքը: Այսպես (մեջբերում ենք միայն հարցերը)՝ «Ի՞նչ է կատարվում, և ով ում սեփականությունն է բաշխում...»¹², «Ի՞նչը փոխվեց վերջին տարիներին, որ «Բաշնեֆթը» կրկին հայտնվեց ուշադրության կենտրոնում»¹³, «Ի՞նչու Հայաստանը չպետք է լռեր Լևոն Հայրապետյանի ձերբակալության հարցում»¹⁴ և այլն:

բ) Առկա են նաև տարբեր տեքստերում հնչող նույնանման հարցեր ներքին հասցեատիրոջ կողմից՝ կապված Լ. Հայրապետյանի անձի և գործունեության հետ. «Ի՞նչ կապ ունի այս ամենի հետ Լևոն Հայրապետյանը...»¹⁵, «Ո՞ւմ էր խանգարում հաջողակ, բայց հայաստանյան օլիգարխիկ համակարգից անկախություն ունեցող գործարարը»¹⁶, «Ի՞նչու այս անգամ կանգ առան հենց Հայրապետյանի վրա»¹⁷ և այլն: Հեղինակներից յուրաքանչյուրը ներքին հասցեատիրոջ հարցը մեկնաբանում է յուրովի:

գ) Այս կամ այն հեղինակի ներքին հասցեատիրոջ հարցի պատասխանը տրվում է ոչ թե տվյալ հեղինակի, այլ նրա գործընկեր լրագրողի տեքստում. «Արդյո՞ք դարաբաղցի հայտնի գործարար Լևոն Հայրապետյանի ձերբակալությունը կարող է կապ ունենալ հայաստանյան ներքաղաքական պրոցեսների հետ»¹⁸, - գրում է «Հայկական ժամանակ» թերթը: Այս և մի շարք այլ հոդվածներում հնչեցված նմանատիպ հարցերին ի պատասխան «Առավոտ»-ի հոդվածագիրը նկատում է. «Պնդել, թե Լևոն Հայրապետյանի ձերբակալությունը կապ ունի Հա-

12 <http://168.am/2014/07/17/388523.html>

13 <http://www.aravot.am/2014/08/02/484893/>

14 <http://hetq.am/arm/news/55872/>

15 <http://168.am/2014/07/17/388523.html>

16 <http://report.am/news/society/tatul-hakobyan-hayoc-ashkharhtml>

17 <http://www.yerkir.am/>

18 <http://www.armtimes.com/hy/5611>

յաստանի կամ Արցախի հետ, առնվազն առայժմ ժամանակավրեպ է»¹⁹: Հարցի անուղղակի պատասխաններից մեկն էլ («Երկիր» թերթի հոդվածագիր) հետևյալն է. «Չի կարելի բացառել, որ դա տեղի է ունենում ռուս-ադրբեջանական պայմանավորվածությունների շրջանակում»²⁰: Տարբեր տեքստերում առկա նման երկխոսային դրվագները բազմաթիվ են:

Տեքստերում ներքին հասցեատիրոջն առնչվող այլ գործառնություններ էլ կան՝ կապված այն հանգամանքի հետ, որ նա ոչ միայն «հարցասեր» է, այլև կարող է «համախոհ ու ընդդիմադիր» լինել հեղինակին²¹: Ուստի հետաքրքիր կլինեն մի շարք երկխոսային տեքստերում այս իրողությունների ընդհանրությունները նույնպես ի մի բերել:

Ուշագրավ մի հանգամանք ևս. Լ. Հայրապետյանին նվիրված հրապարակումներում ակնհայտ է վերհասցեատերերի ներկայությունը (միջազգային իրավունք, արդարադատություն, հայություն, ճշմարտություն, անմեղության կանխավարկած և այլն), որոնք գալիս են լրացնելու թեմայի շուրջ ծավալված երկխոսության ինտերտեքստուալ ընդգրկումները:

Եզրակացություններ

Լրագրող (հեղինակ)–արտաքին հասցեատեր երկխոսային փոխհարաբերությունները որոշակի ճանապարհ են անցնում: Նախքան արտաքին հասցեատիրոջ հետ ուղղակի երկխոսությունը լրագրողը մեղիատեքստում ի ցույց է դնում դերային որոշ պահվածքներ (ներքին հասցեատիրոջ հետ երկխոսային տարրերի կիրառում, տեքստում ընթերցողի հետ անմիջական կապի նախադրյալներ, ժանրի ընտրություն և այլն):

Արտաքին հասցեատիրոջ հետ համախոհության մթնոլորտ ստեղծելու նպատակով հեղինակը տեքստ է ներբերում երրորդ կողմին՝ վերհասցեատիրոջը, որը կողմնորոշիչ դեր կարող է խաղալ երկուստեք փոխըմբռնումներում:

Երկխոսային փոխհարաբերությունները նոր որակ են ձեռք բերում լրագրող–արտաքին հասցեատեր ուղղակի հաղորդակցության ժամանակ: Այս պարագային կողմերից յուրաքանչյուրը և՛ հեղինակ է, և՛ ընթերցող, իսկ միջտեքստային երկխոսություններն ընթանում են մի քանի մակարդակներում՝ հեղինակ–հեղինակ, ներքին հասցեատեր–հեղինակ, ներքին հասցեատեր–ուրիշ հեղինակ և այլն:

Սրանք էլ, ի վերջո, համաբերում են ինտերտեքստուալ այն տարածքը, որն ինքնին մեծ Տեքստ է՝ գրույթին բնորոշ բաղադրիչների լայն ընդգրկումով:

Դավիթ Վ. Պետրոսյան – Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է 20–րդ դարասկզբի հայ գրականության և մամուլի պատմության հիմնախնդիրները («Գրական բանավեճերը 20–րդ դարասկզբի հայ մամուլում», Եր., 2007), հեղինակել է գրականության և ժուռնալիստիկայի զարգացման արդի միտումների նվիրված ուսումնասիրություններ ու հոդվածներ:

19 <http://www.panorama.am/am/press/2014/07/17/aravot/>

20 <http://www.yerkir.am/>

21 Տե՛ս Դավիթ Վ. Պետրոսյան, Լրագրողը և ներքին հասցեատերը հայկական մեղիատեքստերում, «Վէմ», 2014, ապրիլ–հունիս, N 2, էջ 166–172:

Summary

SEVERAL ASPECTS OF THE DIALOGUE BETWEEN JOURNALIST-EXTERNAL ADDRESSEE

On the example of the Armenian media texts

David V. Petrosyan

Dialogical relationship between a journalist (author) and an external addressee in media texts develops in a very interesting way. If during a direct dialogue with external addressees journalist uses some role behavior: creates a direct connection with the reader, the elements of direct dialogue with the external addressee, etc., than the presence of over external addressees in the texts contributes to the creation of an atmosphere of understanding with external addressees. And while direct contact between journalist and external addressee, each party can become an author or a reader, as intertextual dialogues are conducted at several levels: author-author, internal addressee – author, internal addressee – another author, and so on.

Резюме

НЕСКОЛЬКО АСПЕКТОВ ДИАЛОГА ЖУРНАЛИСТ-ВНЕШНИЙ АДРЕСАТ

На примере армянских медиатекстов

Давид В. Петросян

Диалогичные взаимосвязь между журналистом (автор)- внешним адресатом в медиатекстах развивается очень интересным способом. Если во время непосредственного диалога с внешним адресатом журналист использует некоторое ролевое поведение: создает непосредственную связь с читателем, элементы непосредственного диалога с внутренним адресатом и т.д. , то созданию атмосферы понимания с внешним адресатом импонирует присутствие внешнего адресата в тексте. И уже во время непосредственного контакта между журналистом и внешним адресатом каждая из сторон может стать и автором, и читателем, поскольку интертекстуальные диалоги проводятся на нескольких уровнях: автор-автор, внутренний адресат-автор, внутренний адресат-другой автор и т. д.